# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Библиотека
Института
[illegible]
Академия Наук
СССР

338.1
Պ-19

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

Ա2969
338.1
Պ-19

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

*Մենք* ______ ______________________

*Մեքենատրակտորային կայանը, հանձինս նրա դիրեկտոր՝*

______________________ *և* ______________

______________________ *կոլտնտեսությունը, հանձին*

*նրա նախագահ (կամ նրա տեղակալ)* ______________

______________ *կնքում ենք սույն պայմանագիրը։*

*1. Մեքենատրակտորային կայանը պարտավորվում է 1935 թվին իր տրակտորներով, գյուղատնտեսական մեքենաներով և գործիքներով կատարել կոլտնտեսության համար հետևյալ տրակտորային աշխատանքները.—*

17 JUL 2013

| Կուլտուրաներ | Աշխատանքի տեսակը | Աշխատ. ծավալը |
| --- | --- | --- |
| | | |

2. Մեքենատրակտորային կայանը պարտավորվում է իր հաշվին մատակարարել տրակտորների համար վառելանյութ և յուղանյութ, կատարել իր հաշվին տրակտորների և մեքենաների անհրաժեշտ նորոգում, լրիվ վարձատրել կայանի ագրոնոմիական ու տեխնիկական ամբողջ անձնակազմը։

3. Մեքենատրակտորային կայանը պարտավորվում է մշտական օգնություն ցույց տալ կոլտնտեսությանը նրա կազմակերպչական ու տնտեսական ամրապնդման գործում, սպասարկելով կոլտնտեսությանն ագրոնոմիական ասպարիզում, կազմելով նրա արտադրական ֆինանսական պլանները, սահմանելով ճիշտ ցանքաշրջանառություն, օժանդակելով կոլտնտեսության աշխատանքի կազմակերպման և յեկամտի բաշխման գործում, պատրաստելով կոլտնտեսային կադրեր և կազմակերպելով հաշվառում։

4. Առանց բացառության դաշտային բոլոր աշխատանքները՝ նրանց թվում նաև տրակտորների վրա կատարվող աշխատանքները, կատարում են իրենք կոլտնտեսականներն այն կարգով, որը սահմանում է Մեքենատրակտորային կայանը կոլտնտեսության համաձայնությամբ։

Կոլտնտեսությունը պարտավորվում է յերկաթուղային կայաններից վառելանյութը և մեքենաները փոխադրել աշխատանքի վայրը և ջուր տանել տրակտորների աշխատանքի վայրը։

5. Բերքատվության և տնտեսության յեկամտի բարձրացման նպատակով կոլտնտեսությունը և ՄՏԿ-ն պարտավորվում են կենսագործել Շրջգործկոմի կողմից սահմանված ագրոկանոնները և Մեքենատրակտորային կայանի պահանջով անցկացնել այլ անհրաժեշտ ագրոկուլտուր միջոցառումներ և Շրջգործկոմի կողմից հաստատած ցանքաշրջանառությունը։

6. Կոլտնտեսությունը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել Մեքենատրակտորային կայանի կողմից սահմանված պլանի համաձայն հավաքել գոմաղբը, կանոնավոր և խնամքով պահել և փոխադրել դաշտ։

7. Դեզերի դասավորումը և հացահատիկի կալսումը կատարվում է կայանի կողմից որոշված տեղերում։ Մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքների դիմաց հասանելիք բնավարձը կոլտնտեսությունը փոխադրում է հանձնման կետեր իր փոխադրական միջոցներով և իր հաշվին։

8. Կոլտնտեսության պատկանող գյուղատնտեսական բարդ մեքենաներն ավելի մեծ արտադրողականությամբ օգտագործելու նպատակով Մեքենատրակտորային կայանը կոլտնտեսությունից գնում է հետևյալ բարդ մեքենաները

______________________________

______________________________

______________________________

______________ վճարելով ________ ռուբլի մինչև ______________ 1935 թ.





ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна

58875-67

9. Կոլտնտեսության համար Մեքենատրակտորային կայանի կատարած յուրաքանչյուր աշխատանքը վերջացնելուց հետո, Մեքենատրակտորային կայանը պետք է հանձնի, իսկ կոլտնտեսությունն ընդունի այդ աշխատանքը հատուկ արձանագրությամբ, որն ստորագրում են Մեքենատրակտորային կայանի կողմից տրակտորային բրիգադիրը, իսկ կոլտնտեսության կողմից նրա վարչությունը՝ հանձին նրա նախագահի կամ դրա համար հատուկ լիազորված վարչության անդամը։

Արձանագրության մեջ պետք է ճիշտ մատնանշված լինի կատարված աշխատանքի քանակը և նրա որակը։

Կալման արձանագրությունը Մեքենատրակտորային կայանի կողմից ստորագրում է կայանի դիրեկտորը կամ նրա համաձայնությամբ՝ կայանի ավագ ագրոնոմը, իսկ կոլտնտեսության կողմից՝ վարչության նախագահը։

10. Կոլտնտեսության համար Մեքենատրակտորային կայանի կատարած գյուղատնտեսական աշխատանքները վարձատրվում են բնամթերքով, ելնելով բերքատվության հետևյալ չափերից։

ԲԱՄԲԱԿԻ (ՀՈՒՄ) ՄՇԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ (ԿԻԼՈԳՐԱՄՆԵՐՈՎ.)

| Աշխատանքի տեսակը | Բերքատվությունը մի հեկտ. (ցենտ.) | | | |
|---|---|---|---|---|
| | Մինչև 6 ցենտներ | Մինչև 10 ցենտներ | Մինչև 15 ցենտներ | 15 ցենտներից բարձր |
| Գարնան ցրտահերկ | 30 | 45 | 68 | 82 |
| Առաջին վար | 30 | 45 | 68 | 82 |
| Երկրորդ վար | 27 | 40 | 60 | 75 |
| Փոցխ մեկ յերես | 0,3 | 0,4 | 0,7 | 0,75 |
| Դ ի ս կ ո ւ մ | 9 | 15 | 22 | 30 |
| Ց ա ն ք | 3 | 4,5 | 6,5 | 7,5 |
| Կուլտիվացիա | 3 | 4,5 | 6,5 | 7,5 |
| Բերքահավաք տուրմաններով | Հավաք | ված բամբ | ակի 4 և | կես տոկոսը |
| Բերքահավաք սլեդինգներով | Հավաք | ված բամբ | ակի 1 և | կես տոկոսը |
| Մաքրում փորխոռչխատիչներով | Հավաք | ված բամ | բակի 1 և | կես տոկոսը |
| Գյուղատնտեսական ամբողջ աշխատանքների կոմպլեքս (2 վար, փոցխ, ցանք, 2 կուլտիվացիա և հավաք) | 60 | 90 | 135 | 160 |



ՀԱՑԱՀԱՏ. ԱՐԵՎԱԾԱԳ. ՑԵՎ ԲՐՆՁԻ ՄՇԱԿ. ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

(կիլոգրամներով)

| Աշխատանքի տեսակը | Բերքատվությունը մի հեկտարից (ցենտներով) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 3-ից ցենտներ | 3 և 5 ցենտների միջև | 5 և 7 ցենտների միջև | 7 և 9 ցենտների միջև | 9 և 11 ցենտների միջև | 11 և 13 ցենտների միջև | 13 և ավելի |
| Գարնան հերկ և ցել | 10 | 25 | 55 | 80 | 100 | 120 | 145 |
| Ցրտահերկ | 9 | 22 | 48 | 70 | 90 | 108 | 130 |
| Ց ա ն ք | 2 | 5 | 10 | 15 | 19 | 24 | 29 |
| Հ ո ւ ն ձ | 4 | 10 | 21 | 30 | 40 | 48 | 58 |
| Կալսում | 8% | ՄՏԿ-ի | կալսիչ | ներով | կալսած | հաց. | ամբ. քան. |
| Փոցխում 1 անգամ | 0.5 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Դիսկում և կուլտիվացիա | 1 | 2,5 | 5 | 7,5 | 9,5 | 12 | 14.5 |
| Հերկ աշնանացանի համար և ցելերի կրկնավար | 6 | 15 | 30 | 45 | 57 | 72 | 37 |
| Խոզանի յերեսվար | 2 | 5 | 10 | 15 | 19 | 24 | 29 |
| Բերքահավաք կոմբայններ. | 11% | կոմբայ | ններով | հավաք. | հաց. | քանա | կից |
| Գյուղատնտ. հիմնական աշխատ. ամբողջ կոմպլեքսը | 13 | 30 | 60 | 90 | 120 | 150 | 190 |

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

(կիլոգրամով)

| Աշխատանքի տեսակը | 80-ից պակաս | 80 և 100-ից միջև պակաս | 100 և 120-ից միջև պակաս | 120 և ավելի |
|---|---|---|---|---|
| Խոր հերկ | 600 | 800 | 1000 | 1200 |
| Ց ա ն ք | 120 | 160 | 200 | 240 |
| Փոցխում | 30 | 40 | 50 | 60 |
| Խոզանի յերեսվար | 120 | 160 | 200 | 240 |
| Բերքահավաք | 300 | 400 | 500 | 600 |
| Գյուղատնտեսական հիմնական աշխատ. ամբողջ կոմպլեքսը (հերկ, ցանքս, մշակում և բերքահավաք կատարելու համար) | 1020 | 1360 | 1700 | 2040 |

## ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

(կիլոգրամով)

| Աշխատանքի տեսակը | Բերքատվ. մեկ հեկտարից (ցենտներով) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 30-ից պակաս | 30 և ավելի 50-ից պակաս | 50 և ավելի 70-ից պակաս | 70 և ավելի 90-ից պակաս | 90 և ավելի 110-ից պակաս | 110 և ավելի |
| Հերկ | 70 | 210 | 385 | 560 | 700 | 860 |
| Փոցխում 1 չիր. | 4 | 11 | 20 | 28 | 35 | 43 |
| Դիսկում | 7 | 21 | 39 | 56 | 70 | 86 |
| Տնկում | 30 | 90 | 165 | 240 | 300 | 370 |
| Բերքահավաք | 60 | 180 | 330 | 480 | 600 | 750 |
| Թոզանի յերեսավար | 14 | 42 | 77 | 112 | 140 | 172 |
| Գյուղատնտեսական հիմնական աշխատանքների ամբ. կոմպլեքսը (հերկ, տնկում ու բերքահավաքը կատարելու համար) | 140 | 440 | 800 | 1200 | 1500 | 1850 |

11. Հացահատիկային մշակույթների ասպարեզում Մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքի համար կայանին հասնող հացահատիկը կոլտնտեսությունը հանձնում է Մեքենատրակտորային կայանին հացահատիկային բոլոր կուլտուրաներով, բացի յեգիպտացորենից, կոլտնտեսության յուրաքանչյուր կուլտուրայի ցանքի տարածության համեմատ:

Մեքենատրակտորային կայանի աշխատանքի համար նրան հասնող հացահատիկը յեգիպտացորենի ու արևածաղկի դիմաց կոլտնտեսությունը հանձնում է կայանին հացահատիկով այն աշխատանքների համեմատ, որը կատարել է կայանն այդ մշակույթների ասպարեզում:

Բրնձի մշակման ասպարեզում Մեքենատրակտորային կայանի կողմից կատարած աշխատանքի համար բնավարձը կոլտնտեսությունը տալիս է բրնձով (չալթուկով) և չի կարող փոխարինվել այլ կուլտուրաներով:

Կոմպլեքսի կարգով վարձատրելու համար հիմնական գյուղատնտեսական աշխատանքներն ընդունվում են այն



տարածության չափով, որի վրա կատարվել է հիմնական գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ կոմպլեքսը, թեկուզ զանազան հողամասերում: Այդ աշխատանքների մյուս մասը վարձատրվում է որպես առանձին աշխատանք:

12. Բերքատվության չափի համեմատ կոլտնտեսությունն այս կամ այն խմբակին դասելը կատարում է հատուկ հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում են շրջգործկոմի նախագահը, ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից մթերման կոմիտեի՝ շրջանային լիազորը, ՄՏԿ-ի դիրեկտորը և կոլտնտեսության նախագահը՝ ոչ ուշ քան համապատասխան կուլտուրաների բերքահավաք սկսելուց 12 օր հետո:

Կոլտնտեսությունն ըստ բերքատվության այս կամ այն խմբակին դասվելու վերաբերյալ շրջանային հանձնաժողովի որոշումը հանձնաժողովի նախագահը ներկայացնում է քննության և հաստատության բերքատվություն որոշող միջշրջանային հանձնաժողովին, որի որոշումը ՄՏԿ-ի և կոլտնտեսության համար պարտադիր է հաշվառքի ժամանակ բնավարձի չափը սահմանելիս:

Ղեկավարվելով հանձնաժողովի որոշմամբ՝ կոլտնտեսությունն իր բերքատվությամբ այս կամ այն խմբի մեջ դասվելու մասին, Մեքենատրակտորային կայանի դիրեկտորը կոլտնտեսության նախագահի հետ միասին հաշվում են հացահատիկի և այլ կուլտուրաների քանակը, որը հասնում է Մեքենատրակտորային կայանին՝ կատարած աշխատանքների դիմաց, բացի բերքահավաքի աշխատանքից:

Բերքահավաքից առաջ Մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքների համար հաշվառք է կատարվում կալսած հացահատիկի և մյուս կուլտուրաների հավաքված բերքի առաջին պարտիաներից, բայց համապատասխան կուլտուրաների բերքահավաքի սկզբից մեկ ամիս ոչ ուշ:

Հատկավոր կուլտուրաների բերքահավաքի ու կալման հաշվառքը, նաև մյուս հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի, ճակնդեղի, արևածաղկի, կարտոֆիլի բերքահավաքի համար հաշվառք կատարվում է այդ աշխատանքները կատարելուց հետո, յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ։

Մեքենատրակտորային կայանը և կոլտնտեսությունը պարտավորվում են Մեքենատրակտորային կայանի կատարած աշխատանքների դիմաց հասանելիք բնավարձը հացահատիկով մուծել ոչ ուշ 1935 թ. նոյեմբերի մեկից։

13. Մյուս մշակույթների համար (բացի հացահատիկներից, ճակնդեղից, բամբակից, արևածաղկից և գետնախնձորից) հաշվառք է կատարվում ոչ թե բնամթերքներով, այլ դրամով հետևյալ պայմաններով ու ժամկետներին.



14. Մեքենատրակտորային կայանը ցելի և աշնանացանի ու աշնանավարի աշխատանքները կատարում է կոլտնտեսության համար վարկի կարգով, հաջորդ տարվա բերքից բնամթերքով վճարվելու պայմանով։

15. Մեքենատրակտորային կայանը և կոլտնտեսությունը պարտավոր են հացահատիկի կալսումը ծավալել բերքահավաքի հենց առաջին օրից, յուրաքանչյուր կալսիչ մեքենայի համար սահմանել հացահատիկ կալսելու օրական նորմա և ապահովել սահմանված նորմաների անպայման կատարումը։

ՄՏԿ-ն և կոլտնտեսությունը պարտավորվում են հացահատիկը հանձնել պետությանն անմիջականորեն կալսիչի տակից, կալի հենց առաջին օրից, ոչ մի դեպքում թույլ չտալով ձգձգել կալսված հացահատիկի փոխադրումը շտեմարանները։

16. Մեքենատրակտորային կայանը և կոլտնտեսությունը պարտավորվում են խնամքով ու հոգատարությամբ վարվել տրակտորների, ձիերի, գյուղատնտեսական ինվենտարի, սերմացվի և այլ գույքի հետ, ըստ որում Մեքենատրակտորային կայանի այն աշխատողների և կոլտնտեսության այն անդամների նկատմամբ, որոնք մեղավոր են պետական ու կոլտնտեսային գույքն անփույթ պահելու և այդ գույքի հետ անխնամ վարվելու գործում, պետք է ամենախիստ միջոցներ կիրառել՝ մինչև այդպիսիններին կոլտնտեսություններից վտարելը, Մեքենատրակտորային կայանի աշխատանքից հեռացնելը և հասցված վնասի արժեքի բռնագանձումը ներառյալ. իսկ այն անձանց, որոնք չարամիտ վերաբերմունք են ցուցաբերել կոլտնտեսության ու Մեքենատրակտորային կայանի գույքին, քրեական պատասխանատվության են կանչում, համաձայն հանրային սեփականության պահպանման օրենքի։

17. Մեքենատրակտորային կայանն ամենաուշը յերեք ամիսը մեկ անգամ իր աշխատանքի մասին հաշիվ է տալիս կոլտնտվարչությանը և կոլտնտեսականների ընդհանուր ժողովին:

Մեքենատրակտորային կայանի և կոլտնտեսության միջև ամենասերտ կապ հաստատելու նպատակով, Մեքենատրակտորային կայանին կից կազմակերպվում է արտադրական խորհուրդ, վորի կազմի մեջ մտնում է յուրաքանչյուր կոլտնտեսության ներկայացուցիչը: Արտադրական խորհուրդը նիստ է գումարում ըստ կարիքի, բայց վոչ ուշ քան ամիսը մեկ անգամ:

18. Պայմանագրին ամբողջովին կամ նրա առանձին մասերը խախտելու համար մեղավոր կողմը պատասխանատվություն է կրում մյուս կողմի առաջ հետևյալ կարգով. այն վնասները, վորոնք կրել է կոլտնտեսությունը կայանի կողմից պայմանագիրը խախտելու պատճառով (վատ աշխատանք, պայմանագրում սահմանված այս կամ այն պարտավորության չկատարելը և այլն), Մեքենատրակտորային կայանը հատուցում է կոլտնտեսությանը դրամով՝ կոլտնտեսության կրած վնասների մեկ և կեսի չափով, պետական սահմանված գներով և բացի դրանից, Մեքենատրակտորային կայանի դիրեկտորը կանչվում է դատական կամ վարչական պատասխանատվության:

Կոլտնտեսության կողմից պայմանագիրը խախտվելու պատճառով Մեքենատրակտորային կայանի կրած վնասները (վատ աշխատանքը, աշխատանքի դուրս չգալը, վորի պատճառով տեղի յեն ունեցել մեքենաների պարապուրդներ, պլանի թերակատարում, մեքենաների ջարդվածքներ և այլն) կոլտնտեսությունը հատուցում է Մեքենատրակտորային կայանին դրամով՝ նրա կրած վնասի մեկ և կեսի չափով պետական սահմանված գներով: Իսկ կոլտնտեսության կողմից Մեքենատրակտորային կայանին նրա աշխատանքի համար հասնող արտադրանքը չհանձնվելու համար, կոլտնտեսությունից բռնագանձվում է Մեքենատրակտորային կայանին հասնող արտադրանքն անվիճելի կարգով և, բացի դրանից, դրամական տուգանք՝ չհանձնված արտադրանքի արժեքի կեսի չափով, պետական գներով:



ՄՏԿ-ի դիրեկտոր՝

(ստորագրություն)

Կոլտնտեսության նախագահ՝

(ստորագրություն)

ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Գլավլիտի լիազոր № Փ—74

Հրատ. № 194 պատվեր № 169 տիրաժ 1500

Հանձնվել է արտադրության 1935 թ. մարտի 10-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. մարտի 15-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 50.

ՀՀ Ազգային գրադարան
NL0203741

29.989

...ИНСТИТУТА
...ВЕДЕНИЯ
...ии Наук
...ССР